№ 11 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 12 ՄԱՐՏԻ 1894 № 11

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 դրան, կէս տարիանը 6 դրան: Առանձին համարները 5 շահի: Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի, կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի: Թէհրանում գրում են միմիայն խմբագրատանը մէջ: Մեր հասցէն, Téhéran. Rédaction CHAVIGH:

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիւրակէ եւ տօն օրերը 10—2 եղդով: Յայտարարութիւններ ընդունւում է ամեն ժամը: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր Թեմական Առաջնորդը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Դավրէժից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲՈՐՍԱ,

ՄԵՐ ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ

„Շաւիղի“ այս հնամարում տպուած մի լրից երևում է, որ Կալկաթայի Հայերը դիմում են արել Վ. Եհափառ Կաթողիկոսին խնդրելու համար, որ բարեհաճի Ալբ. եպիսկոպոսութեան աստիճան շնորհել թեմիս Առաջնորդ Եսայի Եպիսկոպոսին: Օգուտ քաղելով այդ առթից, մենք ևս կամենում ենք մի քանի խօսք ասել այդ մասին:

Պարսկաստանի և Հնդկաստանի թեմը մեր առաջնորդական թեմերի մէջ քանակարևորներից մէկն է, շնորհիւ այն իրողութեան՝ որ նախ թեմը շատ ընդարձակ է և երկրորդ, որ առհասարակ Պարսկաստանի մէջ հայ առաջնորդները նկատւում են յաչս տեղական իշխանութեան որպէս ներկայացուցիչ հայ ազգաբնակութեան, և նոքա ունին բացի իւրեանց հոգևոր պաշտօնից նաև քաղաքական իրաւասութիւններ: Այս հանգամանքների մէջ Պարսկաստանի երկու թեմերը վերին աստիճանի ծանր և պատասխանատու պաշտօններ են: Եսայի Եպիսկոպոսը՝ իւր մի քանի տարուայ գործունէութեան մէջ, ցոյց է տուել, որ կատարելապէս գիտակից է իւր պաշտօնի ծանրութեան, և ընդունակ արժանապէս վարելու այդ: Այն օրից ինչ նա սկսել է գրել իւր թեմը՝ գտել է մի քանի անկարգ գործերի և անկերպարան հաստատութեանց, շնորհիւ իւր նախորդների անհոգութեան: Այն անխոնջ գործունէութիւնը և անդրդուելի ուղղութիւնը, որ նա ցոյց է տուել այդ անկարգութիւնից, կարգ ու կանոն դուրս բերելու, ամեն գովեստի և գնահատութեան արժանի է:

Եսայի Սրբազանը հազիւ թէ ժամանակ է ունեցել կարգի դնել ամենից առաջ, Ն. Զուղայի ազգային հաստատութիւնքը: Մի քանի տարուայ ընթացքում նոյն տեղի վարժարանները, կեդրոնական դպրոցը, տպարանը, եկեղեցական վարչութիւնները, բոլորը զգացել են նորա ուժեղ, վերանորոգիչ ձեռքի ազդեցութիւնը: Մենք տեղ չունենք այս յօդուածի մէջ մի առ մի խօսելու այդ բոլորի վերայ: Մեր ունեցած տեղեկութիւնը նոյնպէս սահմանափակ է և քաղուած միայն Զուղայի ազգային հաստատութեանց տարեկան հաշուետուութիւնից: Այնքան միայն գիտենք որ այդպիսի նշանաւոր արկիւնքներ չեն ձեռք բերուած առանց շատ մեծ դժուարութեանց:

Լինելով արդարադատ, անտչառ, մի և նոյն ժամանակ խիստ, Նորին Սրբազնութիւնն ի հարկէ յարուցել է իւր դէմ բոլոր նորանց, որոնց շահերը նա չոչնչացրել է: Ոչ մի ձեռք չէ կարող ջնջել մի եղծուած և չունենալ բնդոքողներ ու թշնամիներ. բայց հասարակութեան ստուար և զարգացած մասը Եսայի Եպիսկոպոսի մէջ գտնում է մի արթուն և ձեռներէց հովիւ:

Մենք շնորհաւորում ենք Կալկաթայի հայերին իւրեանց այս նախաձեռնութեան համար, որով ցոյց են տալիս, թէ գիտեն գնահատել ազգային օգտին վերաբերեալ ջանքերը, և անտարակոյս ենք որ Վ. Եհափառ Կաթողիկոսը կը կատարէ նոցա իղձը, մանաւանդ որ, գրեթէ միշտ, Պարսկաստանի և Հնդկաստանի Առաջնորդութիւնը յանձնուած է մի Արքեպիսկոպոսի:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թէհրան 8 մարտի 1894

Թէ ինչու Բաֆֆի ընկերութեան մի քանի անդամակիցները բոլորովին զինուած են „Շաւիղ“ շաբաթաթերթի դէմ, այդ բոլորովին անբացատրելի է մնացել մինչեւ այժմ: Բայց մի բան որ ինձ զարմացնում է, այն է՝ մի՞ դրա ամեն մի քայլափոխում հաստատուած են ինչում մի՞ որ եւ իցէ նիսալ գտնել, եւ թէպան առնելով ամբողջ մի ամիս, լուն ու էզ շրջել, ամեն պատահած տեղում ասել, թէ կուզ հակացող կամ անհակացող մարդու մօտ, թէկուզ ընտանիքներում կամ ամենափոքր երեխայի մօտ, այդ մասին նոքա խորութիւն չեն դնում, այլ ժամանակ բաց են անում բնմբասանքի տոպրակը: Յաւնոր արտի յայտնում եմ, որ խեղճերը շատ են ջարչարւում բայց ձեռքները ոչինչ չէ ընկնում, եւ իրանց լարած թակարդը միշտ դատարկ է հանում: Վերջապէս ճարները կտրուած՝ նոքա ձեռ են առել „Շաւիղ» շաբաթաթերթը եւ ամեն մի հնարքով մի սյ. լանդակ պոչ կպցնելով, իրանց հասակցութեան նիւթ են շինել: Օրինակ, վեր առնենք „Շաւիղի“ № 10-ը որի մէջ հանդիսատեսներից մէկը նկարագրել էր Ս. Վարդանանց հանդէսը, որը Բաֆֆի ընկերութիւնը կատարեց վերջ. 24-ին եկեղեցու բակում: Նա պատրաստ եմ խոստանալ եմ, որ այդ հանդէսը ոչ որի վնասը մի լաւ տպաւորութիւն չը թողել, սրդ՝ եւ այդ տեղ կարդացուածներն այնպիսի գրուածներ, որոնք հանդիսատեսների մեծամասնութեանն ամենամեծ զենցին՝ Իսկ մի մասին, նարդէն այդ շարադրութիւնները վազուց ի վեր ծանօթ լինելով լուսի ծանրոյթ եւ քան պատճառեցին, քան հետաքրքրութիւն: Բոլոր գրուածները ուրիշ հեղինակների շարադրութիւններից էին եւ բառ առ բառ արտագրած լինելով՝ կարդացուեցան հանդիսում: Մյժմ հարցնում՝ եմ, յարգելի ընթերցողներից, ինչ տպաւորութիւն թը թողնէ մի այսպիսի հանդէս հանդիսատեսների վերայ՝ որը բարոյական իմաստ չուներ;

Նոյն դիշերը հանդէսը վերջանալուց յետոյ, ինձ մօտեցան մի քանի անձինք եւ պարզը խոստոտ խնդուեցան, թէ լուսի լաւ կրվնէր՝ որ տանը մնային, քան այսքան երկար ճանապարհ դալին եւ ոչինչ չը հասկանային: Իսկ այդ բոլորը, Բաֆֆի ընկերութեան մի քանի չափազանց եռանդուն անդամակիցները չը քննելով, չիմանալով, կիւրակէ օրը եկեղեցու բակում ապրելու ազատ էին բարձրացրել այդ յոդուածի մասին, որպէս հետեւ. պ. յոդուածագրի՝ շատ ճշդօրէն էր նկարագրել հանդէսը: Նոյն օրը մի քանի հոգի հաւաքուել էին իմ շուրջը, ինձանից էին ցանկանում պ. յոդուածագրի մրէժը լուծել, իսկ ես փարատուած վիճաբանան տուի, թէ դուք մի՞ որ եւ իցէ ինձ՞ հետ մի՞ որ եւ իցէ անհաշտութիւն դանում էք, կարող էք ինքներդ պատասխանել եւ ոչ թէ իմ թիթեղկոչէլ: Ահա նոցա պատասխանը. մենք չէնք հասկանում «Շաւղին», որովհետեւ նորա սկզբից մինչեւ վերջին տողը սուտ է „Շաւիղը“ խառնակիչ թերթ է, եւ մենք մի այդպիսի թերթի երբէք չը-

ուածներ չենք տալ, եւ «Շաւղի» խմբագրութիւնը 'տեսնելով 'որ մենք իրանց թերթին չենք համակրում, չկամեցաւ, այդ բաներն է անում: Նա խորհուրդ կը տայի Րաֆֆի ընկերութեան այդ շատախօս անդամակիցներին, որ աւելի լաւ կը լինէր փոխանակ ի զուր տեղը շատախօսելու եւ սուտ նորա վերայ յարձակուելու իրանք էլ համեստ կերպով յօդուածներ ուղարկէին խմբագրութեան, իսկ եթէ չեն համակրում «Շաւիղին» այդ մասին նորանց մեղադրող չկայ, ամէն մարդ իւր կարծիքների մէջ ազատ է, թող ուղարկեն միւս հայ թերթերին, որոնց խմբագրութիւնները իմ կարծիքով չեն զլանայ տպագրելու նորանց յօդուածները, եթէ միայն հրատարակուելու արժանի լինին;

Տիգրան Ս. Յովսէփեանց

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԷԺԻՑ

Դավրէժ 28 փետր. 1894

Վերջապէս «Խնայողական ընկերութեան» ժողովը կայացաւ ամսոյս 26-ին շաբաթ օրը, մասնակցութեամբ 40 անձանց: Կարդացուեցաւ կանոնագիրը, որ խմբագրել էր մեծ. պ. Նազար էֆ. Գոբոյեանը և որը քիչ փոփոխութեամբ վաւեր ճանաչուեցաւ, փորձառութեանը թողնելով հետզհետէ մշակելու նորան: Առաջիկայ ուրբաթի ժողովը, կընտրի վարչական մարմին, շուտով կանոնագիրը տպագրութեան կըտրուի: Ընկերութեան ժամանակամիջոցն է 10 տարի, անդամավճարն է տարեկան 24 ղրան, երեք վըճարմամբ (կանխիկ): Իւրաքանչիւր 2 տարին նոր վարչութիւն կընտրուի, հին վարչական անդամները կարող են վերընտրուիլ և կանոնագրութիւնը եթէ հարկաւոր է, կարող է փոփոխութեան ենթարկուիլ այդ ժամանակ ձայների առաւելութեամբ:

Վարչութիւնը բաղկացած կը լինի 10 անձինքներից. այն է՝ Նախագահ, փոխ-նախագահ, մի գանձապահ, երեք խորհրդական, երկու հաշուապահ և երկու քարտուղար. մինը միւսին պատասխանատու և բոլորը՝ ընկերութեան: Իւրաքանչիւր անդամակցել ցանկացողը կարող է վերցնել 20 տոմս առաւելն. 20 տոմս ունեցողը ինչպէս և եօթը, ժողովներում կունենայ 2 ձայն: Մասնակցել չը կամեցող տոմսատէրը՝ երբ կամենայ, կարող է ներկայացնել վարչութեանը իւր տոմսը և ստանալ նորա արժէքը:

Որոշուած ժամանակին իւր պարտքը չը վճարող անդամը՝ ենթարկւում է տուգանքի. իսկ մինչև տարուայ վերջը չը վճարող անդամը՝ զրկւում է անդամակցութիւնից, ստանալով մինչև այդ ժամանակ իւր վճարածի կէսը, իսկ միւս կէսը կը մնայ յօգուտ ընկերութեան:

Առ այժմ այս թեթև ակնարկով բաւականանալով սոյն գովելի ընկերութեան կանոնների մասին, ապագային եմ թողնում մանրամասնութիւնները:

Հայ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մի այնքան պարզ և մեղմ քննադատութիւն ինչպիսին էր մեր անցեալ թուի մէջ "Հանդիսատես" ստորագրութեամբ տպած յօդուածը Վարդանանց տօնի մասին, յարուցել է մի ահագին աղմուկ: Մենք լսում ենք որ անցած կիրակի Ղազվինի թաղի եկեղեցու բակում կատարուել է մի աուտօ-դա-ֆէ, և մի ճառախօս պարոն, որի ճառի մասին ակնարկութիւն է եղել այդ յօդուածում, այնքան կատաղել է, որ փրփուրը բերնին, լուտանքներ թափելով հանդիսապէս պատառել է "Շաւիղը": Այս բանը ցոյց է տալիս թէ մեր մէջ մարդիկ ինչ կերպով կարող են պատասխանել մի լրագրական քննադատութեան, և դեռ այդ տեսակները յաւակնութիւն ունին ժամերով զբաղեցնել մի ամբողջ հասարակութիւն: Մենք հրաւիրում ենք այդ պարոններին ուղարկել իւրեանց արտասանած ճառերը մի որ և է արտասահմանեան հայ լրագրի մէջ տպելու, («Շաւիղի» ծաւալը շատ փոքր լինելով) այն ժամանակ մամուլը իւր կարծիքը կը յայտնէ այդ տեսակ գրուածների մասին: Զուր են մարդիկ կարծում որ «Շաւիղը» քննադատելով այդ ճառախօսներին, հակառակութիւն է ուզեցել անել Րաֆֆի ընկերութեան, քաւ լիցի, եթէ հարկ լինի մենք անուններով կապացուցանենք, որ այդ ճառերը շատ աւելի խիստ բառերով քննադատուած են նոյն իսկ Րաֆֆի ընկերութեան ամենից ազդեցիկ, բայց բան հասկացող վարիչներից:

—

Ղազվինուց մեր ստացած մի նամակից մենք ցաւելով իմանում ենք, որ այն տեղի ուսուցիչ Յ. Գ. Բարսեղեանը վարժարանի մէջ գործ է ածում ծեծը, այն էլ շատ խիստ կերպով: Թէ մի այդպիսի վարմունք ինչ աստիճանի հակառակ է ամեն մանկավարժութեան, աւելորդ է գրել, բայց թէ այդ լուրը ինչ աստիճանի ճիշտ է, այդ մենք չը գիտենք: Թղթակիցը զանգատւում է, որ յիշեալ ուսուցիչը մինչև անգամ ուղիղ հայերէն գրել չը գիտէ, տառասխալներ է անում. այդ մասին մենք մինչև անգամ ապացոյց ունենք մեր ձեռքում, և զարմանում ենք որ Ղազվինի դպրոցի հոգաբարձութիւնը ուշադրութիւն չէ անում այդ հանգամանքի վերայ:

—

Մարաղայում դեռ դիֆտէրիտը շարունակում է իւր կոտորածը: Չորս ամսուայ ընթացքում մեռել են 120 երեխայ երկու սեռից: Զարմանալի է Դավրէժում կազմուած առողջապահական խումբը, ոչ մի ուշադրութիւն չէ դարձնում դորա վերայ:

—

Դավրէժի մեր թղթակիցը գրում է որ անցեալ ամսոյ 24-ին Վարդանանց տօնի առթիւ հանդէսներ կատարուեցան Լիլաւայի և Բերդաթաղի դպրոցների թատրոնական դահլիճներում: Պատարագին երգում էր օրիորդաց երգեցիկ խումբը: Չը նայելով, որ այս անգամ երգեցողութիւնը լաւ չանցաւ, այն կարճ ժամանակի պատճառով, որի մէջ պատրաստուեցաւ այդ խումբը, բայց յոյս կայ, որ ապագայում մենք կունենանք կանոնաւոր երգեցիկ խումբ շնորհիւ սկսուած փորձերի: Առաջ սկսուեց Լիլաւայի հանդէսը, նոյն դպրոցի դահլիճում: Նոյն դպրոցի ուսուցիչը Վարդանանց տօնի մասին ընդհանրապէս մի պատմական լաւ տեսութիւն անելուց յետոյ, անցաւ նոյն դարու կանանց և մի համեմատական հայեացք ձգեց նոյն դարու և ներկայ դարու հայ կանանց վերայ: Պէտք է ասել, որ ճառը բաւական յաջողուած էր: Պարոնի ճառին հետևեցին մի քանի երգեր և բանաստեղծութիւններ: Երգուած երգերի մէջ իւր նորութեամբ աչքի էր ընկնում «Հայկական մարշը», որին երգերի խառնուրդ անունը տալ աւելի յարմար էր, քան մեծաբոմբիւն «Հայկական մարշ» անունը: Հանդէսը անցաւ միջակ: Երգեցիկ խումբը և բանաստեղծութիւններ արտասանողները լաւ չէին պատրաստուած: Լիլաւայի հանդէսից յետոյ Բերդաթաղինը կատարուեցաւ. մի ճառից յետոյ երգուեցան երգեր, կարդացուեցան բաւական թուով բանաստեղծութիւններ որոնք, պէտք է ասել, բոլորովին հանդէսին չէին վերաբերում և որոնց մէջ (իսկապէս) այլ հարցեր էին շօշափուած: Երգերի մէջ շատ լաւ երգուեցան «Կըռունկ ուստի կուգաս» և «Մինչդեռ յուսով խայտայ բնութիւն» երգերը: Այդ երգերում սօլօ երգում էր աշակերտուհի Լիզա Վարդանեան, որ հանդիսին միակ շքեղութիւն տուողն էր իւր ձայնով:

—

Ն. Ջուղայուց մեզ հաղորդում են որ

լանին, համայնքների ժողովում, ասաց որ Կիմբրլի մերժեց այն առաջարկը որով Հնդկաստան տալուց բամբակեայ ապրանքների վերայ մաքս պէտք է դրուէր ի նպաստ հնդկաստանի համայնքների ժողովում տնցած այն վճիռը որ արգելում է պաշտպանողական մաքս դնել առանց մի պարտաւորեցուցիչ հարկի գոյութեան:

Լոնդոն, 4|16 մարտ: Բրիտանական մարտանաւերի և ծովային զօրքի հաշիւները ցոյց են տալիս երեք միլիոնից վեր մի աւելացում: Նաւատորմի զօրքի վերայ պէտք է աւելանան եօթը հազար պաշտօնեայ և մարդ: Սիդնէյ Բրքստոն գաղթականութիւնների փոխ-քարտուղար համայնքների ժողովում պատասխանելով մի հարցի, ասաց որ կառավարութիւնը մըտադիր էր դատաւոր և խորհրդականներ կարգելու Մըշօնալընդի և Մատաբելիլանդի համար:

Բէրլին, 4|16 մարտ: Բայխստագը անցկացրեց վաճառականական դաշնագիրը Ռուսաստանի հետ:

Լոնդոն 5|17 մարտ: Թագուհին հասել է Ֆլօրէնս: Ֆաուլէր պատասխանելով զանազան հարցերի ասաց, որ Կիմբրլիի վճիռը՝ Հնդկաստան մտնող բամբակեայ ապրանքները մաքսից ազատ պահելու համար տրուած չէր խորհրդարանի որոշմամբ: Ֆաուլէր ասաց որ նա պէտք է աշխատէր ժողովի սեղանի վերայ դնել բոլոր այն հեռագիրները, որ անցել էին Կիմբրլիի և փոխարքայի միջև Հնդկաստանի տարիֆի վերաբերութեամբ, նախ քան վիճաբանութեան սկսուիլը Հնդկաստանի ֆինանսի վերաբերութեամբ

Լոնդոն, 5|17 մարտի: Կամպբէլ Բաննէրման խօսելով համայնքների ժողովում բանակի վերայ, ասաց որ զօրաժողովը բաւարարացուցիչ է եղած և ամեն բաց մնացած տեղերը լցուած են: Թէ գործաւորները կառավարութեան գործարաններում շատ հաճութեամբ են են ընդունել 8 ժամեայ աշխատութեան օրինագծի գործադրութիւնը, և թէ նա վստահ է, որ այդ կողմից ոչ մի վնաս չէ լինելու կառավարութեանը, յետոյ խօսելով Հնդկաստանի մէջ կազմակերպուած բանակի բարեխառնական (խմիչքների դէմ) ընկերութեան տուած սքանչելի արդիւնքները, նախահաշուի մէջ կը լինի նաև մի առաջարկ այդ տեսակ ընկերութիւններ Անգլիայի մէջ էլ կազմակերպելու:

Լոնդոն, 8|20 Սիդնի Բրքստոն համայնքների ժողովում պատասխանելով մի հարցման ասաց, որ նեղուցների զինուորական ծախսերի խնդիրը կառավարութեան կողմից ուշադրութեան է առնուած և թէ նա յոյս ունի շուտով տեղեկութիւն տալ, թէ կառավարութիւնը ինչ որոշում է տուել այդ մասին: Ֆաուլէր պատասխանելով մի հարցման համայնքների ժողովում ասաց, որ եթէ Հնդկաստանի բամբակեղէնների վերայ ներքին տուրք դրուի, այն ժամանակ մեծ հակառակութիւն չի լինիլ Անգլիայից Հնդկաստան ներածուած բամբակեղէնի վերայ մաքս դնելուն և թէ, եթէ այդպիսի մի առաջարկ ստացուի, կառավարութիւնը ուշադրութեամբ կը քննի:

Լոնդոն, 6|18 մարտի: Ռոզբերին, երեկ խօսելով Էդինբուրգում, ասաց որ Բրիտանական ծովային ոյժի աւելացումը ոչ մի յարձակողական նպատակ չունի այլ աւելի մեծ երաշխաւորութիւն է Եւրոպայի խաղաղութեան համար: Նորին վսեմութիւնը վստահ է, որ յաջորդ ընտրութիւններին աւելի կը նուազէ Իրլանդայի ինքնավարութեան բիլլին հակառակողների թիւը, իրողութիւն՝ որ կարող է համոզել լորդերին: Նա ասաց, որ ամսոյս 12-ին, լորդերի ժողովում իւր ճառը սխալ էր կարդացած և թէ ինքն ասել է, որ ինքնավարութեան բիլլը անցկացնելու համար նախ հարկաւոր է որ դա համոզում ներշնչէ անգլիացիների սրտին: Նա ծաղրեց այն միտքը որ թագաւորութեան վերաբերող օրինագծերը պէտք է անցկենային միայն անգլիացիների քուէներով, և ասաց որ լորդերի ժողովը մի վտանգ է պետութեան համար. բայց կառավարութիւնը անկարող է առանց ժողովուրդի:

Լոնդոն, 8|20 մարտի: Բանկոկում տեղի ունեցած Ֆրա Եօտի դատը, Պ. Գրօսգուրինի սպանման համար, վերջացաւ ամբաստանեալի արդարանալով: Պ. Լէմիրէ դէ Վիլլէս որի, հետ երեկ Փարիզում մի տեսակցութիւն տեղի ունեցաւ, ասաց որ Սիամի դատաստանատան հետ կնքուած դաշնագրի հիման վերայ, կարելի էր Ֆրա Եօտի մասին տրուած վճիռը վերաքննել, մի և նոյն ժամանակ ֆրանսիացիները պէտք է պահեն Զանտաբունը:

Փարիզ, 7|19 մարտի: Լսելով ինչ որ Պէրիէր ունէր ասելու, մեծամասնութեամբ քուէարկուեց ի նպաստ գաղթականութիւնների համար նախարարութիւն կազմակերպուելուն: Կառավարութիւնը խոստանում է որ պատերազմը, արդարութիւնը և կրօնական պաշտամունքը պէտք է գտնուին իւրեանց առանձին նախարարութեանց վերահսկողութեան ներքոյ:

Լոնդոն, 8|20 մարտի: „Տայմզը" յայտնում է, որ արմատականների ամենից լաւ տեղեկութիւն ունեցողների շրջաններում կարծուում է որ անտարակոյս պարլամէնտը յուլիսին կը լուծուի:

Թէհրան 12|24 մարտի 1894
Դրամական արժէքներ (Բորաս)

				դրան	շահի
Պարսկական	20	դ.	էշրէֆին արժէ	35	—
»	10	»	» »	17	10
»	5	»	» »	8	5
Ռուսական	Ռուբլին (ոսկին)		»	40	—
»	Մանէթը (բուք.)		»	5	12
Անգլիական	Լիրան		»	50	—
Ֆրանսիական	Ֆրանկը		»	2	2
Տաճկական	Մէջիդիէն		»	45	—

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Թիֆլիս, Ս. Սողոմոնեան: Ձեր յայտարարութիւնը կրտսուի, միայն ոչ մի պատկեր դեռ հաս չ'նք ստացել այս տեղի փոստատնից, այդ տեղից պահանջեցէք:

Դավրէժ, Օրոր: Ձեր նկարագրութիւնը շատ լաւ էր, բայց արդէն ուշացել էր: Գրեցէք աւելի դիւղական կեանքի մասին:

Արտօնատէր-Հրատարակիչ՝ Անդրէաս Բէկնազարեանց:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՃԱՌԱԿԱՆ

ԳԱՆԳԻ ԵՒ Ք. ՊԱՅԾԱՆԱՆ ԴՊՐՈՑ-ԲԱՆԿԻՆ

ՍԵՆՕՏԱԳԻՐ ՊՈՒՏՈՒՆԵՐԸ

Իրաքանչիւրի գինն է ճանապարհածախսով

40 կ. գումարով ցանկացողներին գիրքուկ

կէ տալի:

Тифлисъ. Саркису Согомонянцъ или Tiflis Sarkis Sogomonian

ՆԵՐԿԱՅ 1894 ԹՈՒԱԿԱՆԻՆ

22-րդ ՏԱՐԻ „ՄՇԱԿ" 22-րդ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակւում է Թիֆլիսում, նոյն դիրքով, նոյն պրոգրամայով և նոյն ուղղութեամբ: „ՄՇԱԿԸ" ստանում է սեփական հեռագրեր:

„ՄՇԱԿԻ" տարեկան գինը 10 րուբլի է, կէս տարվանը՝ 6 րուբլի, ամսականը՝ 1 րուբլի: Գրվել „ՄՇԱԿԻՆ" կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա և Բարոնսկայա փողոցների անկիւնում):

„ՄՇԱԿԻՆ" գրվելու համար, և թղթակցական նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. Tiflis, Rédaction du journal arménien „MSCHAK".

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

„Անօսիմ ընկերութիւնը երկաթուղու եւ ծխաքարշ երկաթուղու գծերի Պարսկաստանում" հիմնել է մեծ արհեստանոց երկաթուղու կայարանի մօտ Թէհրանում:

Այդ արհեստանոցն ունի ռուս արհեստաւորներ եւ վերջերումս առաջել է ամենապարզ եւ ամենանոր մեքենաներ ու ընդունում է պատուէրներ, ձուլելու, մեխանիքական, ատաղձագործական եւ քերել տալու զանազան մեքենաներ, նոյն սարքերը ու նորոգելը:

Արհեստանոցը 1. ձուլում է առարկաներ չուգունից 5 խալվար, իսկ պղնձից մէկ խալվար ծանրութեամբ, 2. տաշում է մետաղէ առարկաներ մեքենաների վրայ 2½ խանի արշին երկարութեամբ, 3. պատրաստում ջրհորների համար ջրահան (բուլղումբաներ), աղալու, քամու տալու, հատիկներից իւղ հանելու մեքենաներ, 4. նաեւ պատրաստում է շոգիէ, բամբուշ ջրի ջրաղացներ ու շոգիէ եւ սապոնի եփելու կաթսաներ: 5. քերել է տալիս է շոգիէ կաթսաներ եւ սարքում է իւր տեղը պահանջողին յանձնելու համար (կաթսայի ոյժը կարող է լինել 150 ձիու ոյժի չափ): 6. քաշում է տելեֆոնի գծեր եւ նորոգում վնասուած մեքենաներ (այժմ 11 հիմնարկութիւններ քաղաքումս միացած են տելեֆոնով գլխաւոր տեղի հետ Բաղչաշում):

Ատաղձագործական առարկաներն են կահկարասիք, յատակներ, շրջանակներ, դռներ եւ այլն:

Պատուէրների համար պէտք է դիմել ծխաքարշ երկաթուղու կանտօրը (ԲԱՂՉԱՇ)

3—4

ԳԻԼԱՆԻ ՀԻՒՐԱՆՈՑ ՌԵՇՏՈՒՄ

Աւետիս Յովսէփեանցի բնակարան և կերակուր, կահաւորուած սենեակներ. քաղաքի կեդրոնում, կառավարութեան ապարանքի հանդէպ

ԳՆԵՐԸ ՉԱՓԱՒՈՐ

Հեռագրի հասցէ „Աւետիս Ռէշտ":

3—3

Hotel de Ghilan

à Recht-Perse

Situé au centre de la ville vis-à-vis du Palais du gouvernement chambres meublées, nourriture.

A DES PRIX MODÉRÉS

Adresse télégraphique „Avedis-Recht"

3—3

GHILAN HOTEL

Recht Persia

Board, lodging and furnished rooms, situated in the centre and opposite government buildings.

Prices moderate.

Telegraphic address „Avetis-Resht"

3—3

ГОСТИННИЦА ГИЛАНЪ

ВЪ РЕШТѢ-(ПЕРСІЯ)

Аветиса Осипіанца.

Меблированныя комнаты, обѣдъ и ужинъ. въ центрѣ города, противъ правительственнаго двора, ЦѢНЫ УМѢРЕННЫЯ.

Адресъ телеграфа „Аветисъ Рештъ."

3—3

Ամեն տեսակ եւրոպական ճարեր կը գտնուին բժիշկ ԲԱԶԻԼԻ դեղատունում Լալէզար փողոցում Թէհրանում. տան բուժանաչափ եւ աւելի գնոյի համար, սովորական արժէքից զիջում կը լինի: Բժիշկը ժամանակում եւս դեղատունը բաց է:

Վարդանանց տօնը այն տեղ կատարուեցաւ մեծ շքով: Ամենափրկչեան վանքում տեղի ունեցած պատարագից յետոյ, ժողովուրդը գնաց եպիսկոպոսի ընդունարանը, ուր մի քանի ազգային երգեր երգուեցան և ուսումնարանի աշակերտներից մէկը կարդաց մի ճառ՝ որով նա համառօտ կերպով բացատրեց Վարդանի տըւած օգուտը ազգին, եկեղեցուն և այլն։ Յետոյ Նորին Սրբազնութիւնը պատասխանեց ճառին՝ ասելով „մենք երկու օրինակներ ունենք մեր առջև, Վարդաններ և Վասակներ, որոնց երկուքի գործերն էլ լաւ յայտնի են ձեզանից ամեն մէկին։ Ընտրութիւնը դոցա մէջ այժմ թողնում եմ ձեզ“։ „Բայց“, աւելացրեց Նորին Սրբազնութիւնը, „Ես շատ ափսոսում եմ որ ձեր մէջ Վասակներ եմ գտնում, որոնք մի չնչին բանի համար պատրաստ են կրօնափոխ դառնալու կամ վընասելու իրենց թեմին այսինքն վանքին“։ Նորին Սրբազնութիւնը վերջ տուաւ իւր ատենախօսութիւնը մի քանի գեղեցիկ խրատներ խօսելով ժողովրդին, և հանդէսը փակեց մի պահպանիչով։

—

Շնորհակալութեամբ ստացանք Բաքուի յայտնի վաճառական պ. Առաքել Տատուրեանցից 18 րուբլի, 6 օրինակ „Շաւղի“ համար, որից 5-ը նա թողնում է խմբագրութեան իրաւունքին ուղարկել ուր որ յարմար կը գտնէ։ Մենք կուղարկենք 1 օրինակ Ղարադաղի Ջանախչի գիւղի հայոց դպրոցին, 1 օր. Շավարին գիւղի քահանային, 1 օր. Մալայեր գիւղի քահանային, 2 օր. Թեմական Առաջնորդին, որից խնդրում ենք որ բարեհաճէ Ջուղայի շրջակայ գիւղերը ուղարկելու։

—

Անցեալ կիրակի օր ս. Գէորգ եկեղեցու մէջ կարդացուեցաւ Վեհափառ Կաթուղիկոսի Անդրանիկ Կոնդակը. Բազմութիւնը շատ մեծ չէր։ Երանի ամեն մի Թեհրանցի հայ մի քիչ մտածէր կոնդակի մէջ քարոզուած մտքերի վերայ։

—

Նորից հարկ ենք համարում յիշեցնել որ վաղը կիւրակի ժամը 3-ին՝ կէս օրից յետոյ, Հայկազեան վարժարանի սրահում տեղի կունենայ Ուսումնասիրաց ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը և հաշուետուութիւնը։

—

„Շաւղի“ առաջին համարը սպառուած է. մեր նոր բաժանորդները, կըստանան 2-րդ համարից։

Դավրէժից „ՍԷՐ“ ընկերութեան վարչութիւնը իւր փետ. 28-ի թղթով խնդրում է մեզ հրատարակել հետեւեալը: «Հայոց կրթական „ՍԷՐ“ ընկերութեան վարչութիւնը շնորհակալութեամբ ստացաւ պ. Ա. Մ. Ս.-ի միջոցաւ հանգանակած հետեւեալ նուէրները Ղազվինից: Ա. Մ. Ց. 20 ղռան, Բ. Ց. 10 ղ. Ե. Տ. Ց. 5 ղ., Ա. Բ. 5 ղ., Ա. Ո. 3 ղ., Ճ. 3ղ., Ա. Հ. Ո. 3 ղ., Գ. Մ. 2ղ. 10 շահի, Ց. Ա. 5 ղ., Թ. Ն. 5 ղ., Ց. Բ. 5 ղ., Խ. Ի. 5 ղ., Մ. Ո. 5 ղ., Ց. Բ. 5 ղ., Ա. Մ. 5 ղ., Ս. Թ. 5 ղ.: Ց. Վ. 2 ղ. 10 շ., Ե. Ծ. 5 ղ., Ա. Խ. 3 ղ., Բ. Ե. 10 ղ., Ս. Բ. 6 ղ., Ա. Մ. Ս. 12 ղ., գումարըն է 130 ղռան:»

—

Հաստատ աղբիւրից մեզ հաղորդում են որ Թէհրանի Դովլաթի թաղի նոր ուսումնարանի հոգաբարձութեան ամեն մի անդամը, մէկ երկու հոգի որբ աշակերտ առել իւր տանը պահում է մինչեւ որ ուսումնարանը բաւական նիւթական կարողութիւն ունենայ նորանց գիշերօթիկ պահելու համար: Մենք ամենայն գովեստով ենք վերաբերում դէպ ի նոցա այդ արարքը, եւ յոյս ունինք որ ինչպէս ասում են, նոքա մինչեւ վերջը պիտի շարունակեն իրանց այդ ընթացքը:

—

Ինչպէս հաղորդում են մեզ Դավրէժից Նորին Սրբազնութիւնը Սալմաստի ուսումնարանի տեսուչ կարգել է պ. Մ. Աւետիսեանցին, որը շուտով պիտի մեկնի Դավրէժից:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կալկաթայից մեզ տեղեկութիւն են տալիս, որ այն տեղի հայկական գաղթականութիւնը ի նկատի ունենալով Պարսկաստանի եւ Հնդկաստանի թեմական Առաջնորդի կատարած բոլոր վերանորոգումներն եւ օգտակար ձեռնարկութիւնները, պաշտօնագրով դիմել է Վեհափառ Կաթուղիկոսին խնդրելով, որ բարեհաճէ շնորհել նորին սրբազնութեան Արքեպիսկոպոսութեան աստիճանը:

—Լօնդօնից հեռագրում են որ Գլադստոնը հիւանդ է ջերմով, որ յառաջ է եկել մրսածութիւնից, և անկողնի մէջ է։ Ամեն գոյնի թերթեր շնորհաւորում են Ռօզբէրիին իւր նոր նախարարապետական պաշտօնը։

—Լօնդօնից հեռագրում են թէ, վերջին լուրերից յայտնւում է որ փորթուգալցիք արգելք լինելով Բրիտանական Զամբէզիի և Տէտէի մէջ տեղ հեռագրական գիծ քաշուելուն, անգլիական մարտանաւը „Մօսքիտօ„ կրակ է արել փորթուգալցիների վրայ, այս պատճառով Քուէլիմանէի քաղաքապետը մեկնել է Տէտէ երթալու մարտանաւերով։ Գլադստոնը չը պէտք է պահէ արքայական կընքապահի պաշտօնը և ոչ էլ իւր աթոռը նախարարութեան մէջ։

—Նոյն տեղից հեռագրում են, որ լորդ Տաւիդմաութ ընտրուած է լորդ կնքապահ։ Պարնելիստները իրանց մի յայտարարութեան մէջ շօշափելով Գլադստոնի հրաժարուելու խնդիրը, ասում են թէ Գլադստոնը հրաժարուեցաւ որովհետև նորա նպատակն էր մի կողմ ձգել Իռլանդայի ինքնավարութեան օրինագիծը, և իրանք վստահութիւն չունին Ռօզբէրիի վերայ։

—Հռոմից հեռագրում են, որ մէկ օր մի ռումբ պայթուեց այս տեղ, պատգամաւորների սենեկի դրում, պատուհանները ջարդուեցան և շրջակայ տները վընասուեցան։ Հինգ հոգի վիրաւորուեցան, կարծում են թէ նորանցից մէկը յանցաւորն է, նա կալանաւորուած է։

—Ինչպէս հեռագրում են Լօնդօնից որ վերջին լուրերին նայելով Գլադստոնը այժմ լաւ է։ „Ստանդարդ“ այսօրուայ յօդուածի մէջ նկատում է որ գործնական քաղաքագէտները ստիպուած են ուշադրութիւն դարձնել Լանքաշայրի քուէի վրայ, Հնդկաստանի ժողովրդին խորհուրդ է տալիս, որ փոխարէն սպառելու իրենց ոյժը բամբակեայ ապրանքների ներածութեան վերայ մաքս դնելու խնդրով, աւելի օգուտ քաղեն ուշադրութիւն հրաւիրելու մի ամենագլխաւոր պահանջի վերայ, այն է փոխարքայական ծախքերի ամեն ճիւղերի վերաքննութեան վերայ։

—Նոյն տեղից հեռագրում են, որ վերջին լուրերից տեղեկանում ենք որ պ. Ժուբերտ հրատարակել է մի յայտարարութիւն, որով Տրանսվալի բնակիչներին համոզում է Մաշօնալանդ չը գաղթել և այդպիսով չը դաւաճանել իրանց հայրենիքին օգնելով Ռոդզին անգլիական կայսերութիւնը տարածելու և հպատակեցնելու Տրանսվալը, որը նորա հայրերը, իրանց արիւնով, ազատել էին անգլիական լուծից։

—Լօնդօնից հեռագրում են որ փետ. 28|12 մարտ Բաթարստից եկած վերջին լրերից քաղում են, թէ արեւմտեան հընդիկները հասնելով Սարմզանդ տեսան որ բնակիչներն արդէն փախել էին, և յետոյ իրենք կրակ տուին այդ տեղին։ Յօգիսխլան յեղապետար փախստական է և կարծում է որ պատերազմը վերջացած է։ Ն. Վեհափառութիւնը, Թագուհին, պարլամենտի նոր նստի առթիւ արած ատենախօսութեան մէջ ասում է որ իւր յարաբերութիւնները բոլոր օտար պետութիւնների հետ բարեկամական են։ Ռուսաստանի հետ արդէն բանակցութիւնները, կեդրոնական Ասիայի վերաբերութեամբ, յառաջ են տարւում, և յոյս կայ

որ շուտով խնդիրը վերջանայ փրխադարձ վստահութեամբ և բարեհաճութեամբ։ Ղորին Վ. Եհափառութիւնը սպասում է Վ. Էմմաչում տեղի ունեցած Անգլիացի և Ֆրանսացի դօրքերի ընդհարման քննութեան արդիւնքին, և վստահ է որ այդ ոչիսի ոչրալի պատահարները կը քննուին այնպիսի պաղարիւնութեամբ և անկողմնակալ մտքով որ վայել է երկու մեծ ազգերին, ինքնավարութեան օրինագծի վերայ քչ մի ակնարկ չեղաւ։ Ղորին Վ. Եհափառութիւնը աւելացնում է, որ կատարեալ և հարկաւոր նախապատրաստութիւններ կրկատարուին կայսերութեան պաշտպանութեան համար։ Միացեալ-Նահանգների կառավարչութեան հետ բանակցութիւններ է լինում, Բէհրինգի ծովի մասին տրուած վճիռը գործադրելու համար։ Անգլօ-Չինական մի դաշնագիր ստորագրուել է, որով որոշուում է Բիրմանիայի և Չինաստանի սահմանագիծը։

Մեջլ՝ լրագիրը հաղորդում է, որ Հնդկաստանի Կարգադրութիւնը պատրաստում է նորոգումներ մտցնել Ճանապարհի խնդրոյն առիթով 90 միլիոնի հաշուով։ Հանդուցեալը Պարնիատանի եւ Հնդկաստանի Ռամի նշանաւոր քաջանաներից մի մեկն էր եւ մի ժամանակ նրա քանցղրութեան իրաւունքը, նախկին ատաջնորդ Գրիգորիս արքեպիսկոպոսի մեռքով, մեծ յուզմունք եւ ամբոխի յարուցեց, հրաւիրելով Ներսէս պատրիարքի եւ Խրիմեան Հայրիկի միջնորդութիւնը։ Խաչիկեան քահանան Ն. Զուզայեցի էր։ Նա Ջանդիսի ուղղութեամբ է նա Կալկաթա փոխեալ եւ այդ տեղ եւս հաստատուած էր։ Ինչով կամենալն, բայց անհանգարտ բնաւորութեան տէր, իսկ Հնդկաստանի հայ գաղթականութեան մէջ մեծամեծ յուզմունքների եւ երկպառակութիւնների պատճառ դարձել, ունենալով իւր ջերմ կիրքերի եւ տարերային ուժերի հակառակութեան համար։ Ամբամ քանդրուած է Ռեմիանի ապաշնորդներից։ Երկրորդ բաշխարարդ արծակուց միայն Ներսէս պատրիարքի, Խրիմեանի եւ հանգուցեալ Մակարի միջնորդութեան շնորհիւ որովհետեւ քանդրող առաջնորդը, Գրիգորիս ակնեցի եպիսկոպոսը, երկար տարիներ յամառելի էի եւ չէր ուզում ոչ ոչ։ Խաչիկեան պատմում է եւ լուրեւ գրվածն նա ունի հրատարակած Կաթողիկէի Մարդասիրական ճեմարանի տարեգրում մի քանի հատոր զրաբար քանաստեղծութիւններ, քրիստոնէական գրուելիք։ Ն. Զուզայի միաջնորդների պատմութիւնը Շահանշահի ժամանակից սկսած մինչեւ Գրիգորիս ակնեցի։ Թաղուած Առաջնորդի կենդանութիւնը եւ մի քանի քանանոցներ։ Ներկայ անպատրաստ Ռոմի է 30.000 ռուբլեանի (300,000 ֆրանկ) հաշուութիւն որ կտակել է Էջմիածնին, Կրթարանին եւ ազգային ուրիշ հաստատութիւնների։

— Նոյն լրագրի քաղում ենք հետեւեալը։ Էրզրումի հանգամանքներ նոր հանդիպումներ մի հետեւեալ ճշգրտ. 1893 թուականի ամսոյ սկսած պատերազմի ալիք որ ծաւալ ստացեալ է սաստիկ ազգ ազգայնոցի Դաշնակցութիւնը կնքուեցաւ ամենածանր տանջանքներից։ Մեր օրերս, Էրզրումի նահանգի Դալի-Բաբա գիւղից մի քանի տուն հայեր դուրս եկան գաղթելու։ Ճանապարհին նրանց վերադարձուցին Զալանգիրլու նահանգիցով։ Խեղճերը, սարսափած սկսում են վախենալ զանազան կողմեր, ընտանիքներ ազգիի, ինչպէս ի լինում, կորցնում են իրանց բնակիչներին։ Դիշերը վրայ է հասնում։ Ճանապարհը չը գիտենալով խեղճերը մնում են դադարել Առաւօտեանց շատ քրտնելուց յետոյ, գտնում են նրանց մի փոքր ծմբի տակ իրար վերայ ծփելուած, երկուսը ցրտից սպրդեն մառած, միայն մէկը կենդանի։ Դարձեալ են, որ այսպիսի աղետալի դէպքեր շատ են լսուում Էրզրումի վիլայէթի զանազան կողմերում։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Լոնդոն, 1/13 Մարտի։ Գլադստոնը այժմ բնակւում է Բրայտոնում։ Լորդերի ժողովը մի ուղերձ քուէարկեց իբրև պատասխան գահական ճառի։ Տեղի ունեցած վիճաբանութեան մէջ Ռոզբէրին ասաց որ Եգիպտոսը այս րոպէին գտնւում է խաղաղ դրութեան մէջ, բայց ի նկատի ունենալով վերջին անցքերը, Մեծն Բրիտանիա դեռ քիչ ժամանակ պէտք է ամենայն զգուշութեամբ վերաբերուի գործերի վերայ։ Հայաստանի ժողովում սրը Հարքուրտ խոստացաւ վիճաբանութիւն բանալ Հնդկաստանի Ֆինանսական հարցերի մասին, Ջատկից անմիջապէս յետոյ Լոնդրնի վաճառականական ժողովը մի գեկոյցով դիմում է կառավարութեանը խնդրելով որ նա միջոցներ ձեռք առնէ նորից սկսելու Բրուսելի արծաթի համաժողովը, յուսալով որ նորանոր վիճաբանութիւններ և վերջին դէպքերից գոյացած լուսաբանումը կարող են տալ մի արդիւնք դարմանելու այն չարիքը, որով քայքայուել է ամբողջ արևելքի վաճառականութիւնը։ Լորդերի ժողովում երեկ գիշեր, Սալիսբուրին առաջարկեց կառավարութեանը, անմիջապէս գիմել ժողովրդի վրճռին, Իրլանդայի ինքնավարութեան բիլլի վերաբերութեամբ, որովհետև յապաղումն կարող էր մնալակար լինել թէ Անգլիային և թէ Իրլանդային։ Լորդ Ռոզբէրին ասաց կառավարութիւնը պատրաստ է դիմելու ժողովուրդին ինքնավարութեան բիլլի նկատմամբ, երբ ժամանակը գայ։ Ռիսո Ջանէյրոյից եկած լուրերին նայելով, ապոտամը ամիրայ Դագամանն մտել է փորթուգալական մի նաւ և յայտնել է թէ ինքը պատրաստ է ընձեռնուել լինելու մարաջախտ Պէյքսօտոյին, իւր պաշտօնեաներով Հանդերձ, եթէ նոցա պաշտպանութիւնը երաշխաւորուի։ Լորդ Ռոզբէրին լորդերի ժողովում բարձրացնում իւր ոտենախօսութեան մէջ, պատմեց որ ինքը համամիտ է Սալիսբուրիի հետ թէ նախ քան պաշտպանելը ինքնավարութիւն շնորհել Իրլանդային, Անգլիան պէտք է համոզուի զգալի գորու յարդարացի ինելու մասին։

Լոնդոն 214 մարտ։ Երեկ գիշեր համայնքների ժողովում ի պատասխան գահական ճառի արուելիք ցուցերգի վիճաբանութեան ժամանակ մեծ յուզմունք պատճառեց Լաբուշերի այն բարեփոխումը, որով առաջարկում էր զրկել Լորդերին նոյն իրաւունքից որ նոքա գործ ունենալ դրել մերժելով բինագծեր որոնք ընդունուած են 147 քուէով 145 քուէի դէմ։ Չ նայելով ը Հարբուրտ հակառակեց փոփոխութեան առաջարկին ասելով թէ այդ բաը տեղի կը տ շատ ծանր հետեւանքների, մեծամասնութիւնը կազմուեցաւ արմատականների և իրլանդական երկու կուսակցութիւնների։ Երկպառակութիւնը աւելի շատ ծագեց քան թէ յուսալի էր, և այսպէս ընդիմադիրներից մէկ մասը թողեցին ժողովը և գնային ընթրելու։ Նոյնպէս երեկ գիշեր Չէսնին մի փոփոխութիւն առաջարկեց այդ ողբի մէջ, ցաւալանալով որ Հնդկաստանի նոր թաղթի մէջ բամբակի մաքսը մեղմացուած էր գիշել։ Գաուլէը Հնդկաստանի պետական քարտուղարը, ընդիմացաւ ասելով, որ այդ նիւթի վերայ որևէ վիճաբանութիւն անտեղի է քանի որ ինքը, արդէն խոստացել էր քիչ ժամանակից դիւրութիւն տալ այդ մասին վիճաբանութիւն բանալու։ Նպատակեց այն իրողութիւնը թէ Մանչէստերի մրցումը Հնդկաստանի հետ վնասակար է և ասաց, որ եթէ բամբակի ներածութեան վերայ մաքս դրուէր, մինչդեռ Հնդկաստանի մէջ գրտնուող գործարանների վերայ ոչ մի տուրք չը կայ, ուրեմն Հնդկական սպառողները պէտք է վճարեն այդ։ Այսպէս առաջարկուած փոփոխութիւնը բարձրացաւ առանց երկպառակութեան։ Ռիսո Ջանէյրոյից եկած վերջին լուրերից երևում է Մարաջախտ Պէյքսօտո մերժել է ապստամբ ամիրայ Դագամայի պայմանները։

Փարիզ 315 մարտի։ Մի անիշխանական, որ ռումբ էր տանում Մադլէնի մէջ, կպայ դրան, և ոգնմբը պայթելով օդը հանեց նորան։

Լոնդոն 315 մարտի։ Բանակի հաշիները ցոյց են տալիս 287000 անգլիական ոսկու ծախքի աւելացումը։ Գաուլէը այս երեկոյ պատասխանեցրեց Մակֆէլը